



**ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ...
ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՀԱՆԴԵՐՁ,
ԴՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿՈՉՈՒԱԾ ԵՍ**

**«Հոգեւոր մարդիկ կ’ենթարկուին խիստ փորձութիւններու, որոնց
աղբիւրը սկզբնական մեղքն է»:**

ՄԵՐ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԸ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՈՒՂՆԵՆՔ

Մեզի համար չարը իրական է, որովհետեւ ան մարդոց սրտերուն մէջ կը բնակի եւ այնտեղ կ’աշխատի՝ չար ու պիղծ մտածումներ ներշնչելով անոնց, եւ թոյլ չի տար, որ մաքուր սրտով աղօթեն: Այլ ընդհակառակն, մարդոց սրտերը այս աշխարհի հրապոյրներով կը գերեվարէ եւ ամբողջապէս անոնց հոգիներն ու մարմինները իրեն կ’ենթարկէ: Այնպէս՝ ինչպէս Սատանան օդին մէջ է եւ Աստուած ալ հոն է, բայց ան բնաւ եւ որեւէ ձեւով չ’ազդուիր անոր հետ ըլլալովը, նոյնպէս ալ թէ շնորհքը եւ թէ մեղքը ներկայ են մարդուն հոգիին մէջ եւ ատով հանդերձ Աստուծոյ շնորհքը բնաւ չ’ազդուիր մեղքին ներկայութենէն: Եւ այնպէս՝ ինչպէս որ ծառան իր Տիրոջ մօտ կանգնած ըլլալով, միշտ վախի մէջ կ’ըլլայ իր տիրոջ մօտ կանգնած ըլլալուն պատճառով եւ ոչինչ կ’ընէ առանց իր տիրոջ հրամանին, այդպէս ալ մենք մեր մտածումները պէտք է առ Քրիստոս՝ մեր Տէրը ուղղենք եւ անոր յարինք. անոր՝ որ ինք միայն մարդոց սրտերն ու մտածումները գիտէ, եւ կատարելապէս յուսանք ու վստահինք, որ Ան մեր «փառքն է», «Հայրն է» եւ մեր «հարստութիւնն է»:

Անհրաժեշտ է, որ միշտ զգաստ եւ երկիւղած ըլլանք: Նոյնիսկ երբ մարդ Աստուծոյ շնորհքը չէ ստացած, զայն իր մէջ չէ արմատաւորած եւ անոր մէջ չէ հաստատուած, որպէսզի անով առաջնորդուի եւ ապրի իբրեւ իր բնութեան հետ կապուած մէկ իրականութիւն, ապա նուազագոյնը իր մէջ իբրեւ անփոփոխ բնական ճշմարտութիւն պէտք է զգաստութիւն, երկիւղ, աշխատասիրութիւն եւ սրտի խոնարհութիւն ունենայ:

ՇՆՈՐՀՐԸ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՍԵՐԸ Կ’ԱՃԵՑՆԷ ԵՒ ՍՐՏԵՐԸ ԿԸ ՓՈԽԷ

Այնպէս՝ ինչպէս մեղուն մեղր կը շինէ փեթակին բջիջներուն մէջ, այդպէս ալ աստուածային սէրը գաղտնօրէն սրտին մէջ կ’աճի եւ զայն դառնէ՝ քաղցրի եւ կոպտութենէն քնքուշութեան եւ ազնուութեան կը փոխակերպէ: Եւ ինչպէս որ ոսկերիչն ու քանդակագործը, երբ պատկեր մը կը նախշեն կամ կը քանդակեն, նախ անոր մանրամասնութիւնները կը փորագրեն եւ երբ աւարտի, այն ատեն պատկերը տեսանելի կը դառնայ իր լուսեղէն փայլով, այդպէս ալ ճշմարիտ արուեստագէտ Արարիչ Աստուած մեր սրտերուն վրայ կը փորագրէ ու կը քանդակէ եւ զայն լոյսեան մէջ կը նորոգէ, մինչեւ հասնի անոր մարմինէն բաժնուելու ժամանակը եւ այն ատեն միայն յստակօրէն կը այտնուի հոգիին գեղեցկութիւնը: Իսկ անոնք, որոնք նկարագարդուած ամանեղրններ կ’ուզեն շինել, նախ կաղապարը մոմի վրայ կը շինեն եւ ապա հալած մետաղը կաղապարին մէջ պարպելով՝ կ’ամբողջացնեն սկզբնական ծրագիրը: Այդպէս է նաեւ մեղքը, որ թէեւ մարմին չունի, բայց ունի պատկեր եւ զանազան ձեւեր կը ստանայ: Նոյնպէս է նաեւ մեր ներքին մարդը, ան պատկեր եւ ձեւ ունի: Եւ ինչ մեծ եւ թանկագին է այս անօթը, որովհետեւ ան միակն է, որ Տէրը բոլոր արարածներուն մէջէն զինք հաճեցաւ: Բարի հոգիին մտածումները թանկագին քարերու կը նմանին, մինչ պիղծ մտածումները «մտելներու ոսկորներով եւ ամէն տեսակ պղծութիւններով» լեցուն են (տես Մտ 23.27):

**ՄԵԾՆ ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ
«ՀՈԳԵՒՈՐ ՔԱՐՈՋՆԵՐ»
Հայացուց՝ Մակար Արք. Աշգարեան
(Շարունակելի 4)**

**ՀԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ**

Մեր Ս. Պատարագը այսօր կը ներկայանայ իբրեւ գեղեցիկ ու կատարեալ ամբողջութիւն մը, ինչպէս մեզի՝ այնպէս ալ օտարներուն համար: Եւ փաստօրէն, այդ օտարներէն մէկը, առիթով մը ներկայ ըլլալէ ետք մեր Պատարագի քառածայն շքեղ երգեցողութեան, ըսած է՝ թէ հիանալի համանուագ (օրաթորիօ) մըն է ան: Կարծէք մէկ հեղինակի ձեռքով, մէկ հզօր ներշնչումով ու բացառիկ ճաշակով յարդարուած գործ մը ըլլար:

Սակայն, ճշմարտութիւնը այն է, որ Պատարագը եկեղեցական որեւէ ուրիշ արարողութեան չափ, եւ թերեւս բոլորէն աւելի, փոփոխութեանց, կամ աւելի ճիշդ՝ աստիճանական զարգացման ենթարկուած է:

Դժուար ու երկար պիտի ըլլար այդ բոլոր փոփոխութեանց մանրակրկիտ պատկերը ներկայացնել: Բայց շատ հպանցիկ ձեւով մը կարելի է հետեւեալ քանի մը հանգրուանները ուրուագծել.-

1. Քրիստոսի կողմէ հաստատուեցաւ Խորհուրդը՝ իր պարգագոյն ձեւով ու բառերով: (Տես Մտ 26.17-30, Մր 14.12-26, Ղկ 22.7-20, Ա. Կր 11.23-29):

2. Առաքեալները ուր որ գացին՝ «Հացի բեկանումը» կատարեցին: Անշուշտ, այդ արարքէն առաջ, անոնք պատմեցին չարչարանքներու եւ խաչի մահուան նախօրեակին Քրիստոսի Վերջին Ընթրիքը, վերադարձուելով Քրիստոսի արտասանած բառերը, այնպէս՝ ինչպէս դրոշմուած էին իրենց մտքերուն մէջ: Հացի բեկանումը անշուշտ կը կնքուէր գոհաբանական աղօթքով եւ հաւանաբար՝ գոհաբանական մէկ-երկու Սաղմոսով:

3. Առաքեալներէն ետք, տեղական իւրաքանչիւր եկեղեցի շարունակեց Ս. Պատարագը կատարել իր այդ պարգագոյն ձեւին մէջ: Պատարագողը կ’ըլլար տեղւոյն Եպիսկոպոսը, այսինքն՝ տեղական եկեղեցիին վերատեսուչը, իսկ երէցները կամ քահանաները, եթէ կային, անոր կողքին կանգնած կը սպասարկէին: Այն բանաձեւը, որ առաքեալներէն ստրված էին, կը կրկնէին գրեթէ բառացի, կամ թեթեւակի ազատութեամբ մը: Շուտով, երկրորդ դարու սկիզբներէն, այդ բանաձեւերը գրի առնուեցան, ասանդութիւնը աւելի ամուր պահելու համար: Բայց պարտադիր չէր անպայման այդ բանաձեւը կրկնել: Այն Եպիսկոպոսները, որոնք շնորհքը ունէին ազատ կերպով աղօթելու, անոնք իրենց բառերով եւ իմաստի նոր ճոխացումներով կրնային խորհուրդը կատարել:

4. Պատարագի խորհուրդը 3-րդ եւ 4-րդ դարերուն նոր զարգացումներ ապրեցաւ: Սկզբնական մէկ եւ միակ աղօթքը շրջանակուեցաւ ուրիշ աղօթքներով, խնդրանքներով, մաղթանքներով, յիշատակութիւններով, գոհաբանական բառերով կամ երգերով: Առաքելական ծագում ունեցող տարբեր եկեղեցիներու մէջ կը տեսնենք երեւան զալը տարբեր Պատարագներու, որոնք նոյն կորիզը ունենալով հանդերձ՝ իրենց զարգացման մէջ շատ տարբեր են իրարմէ:

Այսպէս օրինակ՝ 3-րդ դարուն արդէն Երուսաղէմի մէջ մշակուած էր Պատարագ մը, որ կը կրէ Յակոբոս Առաքեալի անունը: Մշակումը Առաքեալինը չէ անշուշտ, բայց անոր կորիզը կու գայ նոյնիքն Առաքեալէն, որ Երուսաղէմի եկեղեցիին առաջին Եպիսկոպոսն էր: Արեւելքի բոլոր Պատարագներուն ալ սկզբնաղբիւրը Ս. Յակոբոս առաքեալի այս Պատարագն է:

Եգիպտոսի մէջ՝ Աղեքսանդրիա, յառաջ եկաւ ուրիշ Պատարագ մը, որ այդ եկեղեցիին հիմնադիր առաքեալին՝ Ս. Մարկոսի անունով կը կոչուի: Արեմուտքը ունեցաւ իր Պատարագները, որոնք զիրենք խմբագրող Եպիսկոպոսներուն կամ եկեղեցիներուն անունով ճանչցուեցան (Ամբրոսեան Պատարագ, Կելասեան Պատարագ, Գրիգորեան Պատարագ, Գաղղիական Պատարագ, եւլն.): Արեւելքի Պատարգներու մշակման ամէնէն բեղմնատու դաշտը եղաւ Կապադովկիան, ուր Ս. Բարսեղ Կեսարացի մշակեց ու խմբագրեց իր անունով ծանօթ Պատարագը, սկզբնաղբիւր ունենալով Ս. Յակոբոս Առաքեալի Պատարագը: Իսկ Ս. Գրիգոր Նազիանզացի՝ «Աստուածաբան» մականուանուած, Պատարագի չորս տարբեր խմբագրութիւններ հրատարակեց:

Անտիոքի առաքելական աթոռին տիեզերահռչակ հայրապետը՝ Ս. Յովհան Ոսկեբերան, ինք եւս Բարսեղ Կեսարացիի խմբագրած Պատարագը նոր մշակումի ենթարկելով, խմբագրեց Պատարագ մը, որ ցարդ Յոյն կամ Բիւզանդական բոլոր եկեղեցիներուն մէջ գործածուող սովորական Պատարագն է:

Վերոյիշեալ անուններէն ոմանք կարելոք են մեզի համար, որովհետեւ սերտօրէն կ’առնչուին մեր Պատարագի պատմութեան:

**«ՀԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ»
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ,
ԿԱՌՈՅՑԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
ԶԱՐԵՇ ԱՐՔ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆ**

THE LORD OUR SHEPHERD

The Lord is my shepherd;
I have everything I need.

He lets me rest in fields of green grass
and leads me to quiet pools of fresh water.

He gives me new strength.
He guides me in the right paths,
as he has promised.

Even if I go through the deepest darkness,
I will not be afraid, Lord,
for you are with me.

Your shepherd's rod and staff protect me.

You prepare a banquet for me,
where all my enemies can see me;
you welcome me as an honored guest
and fill my cup to the brim.

I know that your goodness and love will be with me all my life;
and your house will be my home as long as I live.





ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԻՆՉ ԻՄԱՍՏ ՈՒՆԻ ԽՈՒՆԿ ԾԽԵԼԸ ԿԱՄ ԽՆԿԱՐԿԵԼԸ:

Շատ հին ժամանակներէ եկած ասանդութիւն մըն է ծիսական արարողութեանց ընթացքին խունկ ծխելը կամ խնկարկելը:

Եբրայեցիները վաղուց սովորութիւն ունէին պաշտամունքի ընթացքին խունկ ծխել, եւ անոր համար ալ տաճարին մէջ ունէին Խնկարկութեան յատուկ սեղան մը, որ կը գտնուէր Սրբութիւն կոչուած վայրին մէջ:

Հայ Եկեղեցոյ ծիսակատարութեան ու Ս. Պատարագի ընթացքին գործածուող խունկը, որ պատրաստուած կ'ըլլայ հոտաւէտ ծառերու խէժերէ, նախապէս կ'օրհնուի քահանային կողմէ: Սարկաազը աջ ձեռքով բռնած բուրվառը, որուն մէջ վառած ածուխը կ'ըլլայ, իսկ ձախ ձեռքով՝ խնկամանը, որուն մէջ խունկը դրուած կ'ըլլայ, կը մօտենայ քահանային ու կ'ըսէ. «Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ, կեցր՛ եւ ողորմեա՛: Օրհնեա՛ տէր»: Իսկ քահանան կը պատասխանէ. «Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն»:

Խնկարկութիւնը կը խորհրդանշէ առ Աստուած բարձրացող աղօթքը: Խունկի բուրմունքին հետ աղօթքը վեր՝ երկինք կը բարձրանայ, ինչպէս Սաղմոսերգուն կ'ըսէ. “Ուղիղ եղիցին աղօթք իմ, որպէս խունկ առաջի քո Տէր, համբարձումն ձեռաց իմոց՝ պատարագ երեկոյի» («Իմ աղօթքս քեզի մատուցուած խունկ թող ըլլայ, վեր բարձրացած ձեռքերս՝ իրիկնային զոհ», Սաղմոս 141.2):

Խունկի բուրմունքը կը խորհրդանշէ նաեւ Քրիստոսի քաղցրութեան տարածումը ամբողջ աշխարհին մէջ:

Վառած ածուխը կը խորհրդանշէ հաւատքով վառ սիրտը, իսկ խունկը՝ այդ հաւատքին, տաքութեան ծուխ տուող՝ բուրումնաւէտ աղօթքը: Ինչպէս որ երբ ածուխը վառած չըլլայ կամ խունկը խոնաւութիւն առած ըլլայ չի վառիր ու չի մխար, այնպէս ալ՝ լոկ շրթնային աղօթքը, առանց ջերմութեան ու խոր հաւատքի, առանց սիրտի ու հոգիի, կը նմանի մարած ածուխին կամ խոնացած խունկին, որ իջ կը վառի եւ իջ ալ կը ծխայ:

ԻՆՉՈ՞Ւ ՊԷՏՔ Է ԵՐԿՐՊԱԳԵԼ:

«Երկրպագել» կը նշանակէ մինչեւ գետին խոնարհիլ եւ զԱստուած փառաւորել: Երկրպագութիւնը երբ կը կատարուի Ամենասուրբ Երրորդութեան անունով, անիկա կը խորհրդանշէ փառաւորում եւ պաշտամունք Սուրբ Երրորդութեան երեք Անձերուն: Իսկ երբ անիկա կը կատարուի ի դէմս սուրբերուն, ատիկա կը խորհրդանշէ յարգանք ու ակնածանք անոնց ապրած վարքին դիմաց:

Պէտք է երկրպագել ամէն անգամ, երբ Ս. Պատարագի ընթացքին սարկաազը կը հրաւիրէ բոլոր հաւատացեալները, հոգեւորական թէ աշխարհական, Աստուծոյ դիմաց խոնարհելով երկրպագելու՝ «Աստուծոյ երկրպագեսցուք»: Երկրպագելէ ետք պէտք է երեսը խաչակնքել:

Երկու ձեւով կարելի է երկրպագել. գլուխը խոնարհեցնելով եւ ծնրադրութեամբ: Այս երկրորդը կը կոչուի նաեւ՝ ծնրադիր երկրպագութիւն, որ յատկապէս կը կատարուի առանձնական աղօթքի ընթացքին:

Տէր Տաթեւ Աւ. Քինյ. Միքայէեան

ԱՆԴԱՍԱՆ

Արեւելեան կողմն աշխարհի
Խաղաղութիւն թող ըլլայ...
Ո՛չ արիւններ, քրտինք հոսին
Լայն երակին մէջ ակօսին.
Ու երբ հնչէ կոչնակն ամէն գիւղակի՝
Օրհներգութիւն թող ըլլայ:

Արեւմտեան կողմն աշխարհի
Բերրիութիւն թող ըլլայ...
Ամէն աստղէ ցօղ կայլակի,
Ու ամէն հասկ ծովէ ոսկի.
Եւ ոչխարներն երբ սարին վրայ արածին՝
Ծիլ ու ծաղիկ թող ըլլայ:

Հիւսիսային կողն աշխարհի
Առատութիւն թող ըլլայ...
Ոսկի ծովուն մէջ ցորեանին
Յաւտ լողայ թող գերանդին.
Ու լայն ամբարն աղուններուն երբ բացուի՝
Բերկրութիւն թող ըլլայ:

Հարաւային կողմն աշխարհի
Պըտղաբերում թող ըլլայ...
Ծաղկի մեղրը փեթակներուն,
Յորդի գինին բաժակներուն.
Ու երբ թխեն հարսերը հացը բարի
Սիրերգութիւն թող ըլլայ:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

THE BOOK OF 2 CHRONICLES


WRITTEN: LATER THAN 1 AND 2 KINGS (PROBABLY 350-300BC)

WHAT YOU NEED TO KNOW:

2 Chronicles is a direct follow-on from 1 Chronicles, covered the rule and reign of David, this book moves on to look at the rule of Solomon in a very positive way – mostly ignoring his weaknesses. However, it also records the defeat of the northern and southern parts of the Kingdom before the exile. There are a lot of details about the building of Solomon’s temple. This may be because, before the exile, the temple was destroyed. The people who returned from Babylon had to build it all over again and would need these instructions!

WHY READ IT?

Although 2 Chronicles is a retelling of 1 and 2 Kings, it highlights different stories, aspects and themes. The point of this book is not necessarily historical accuracy but the lessons that might be learned from the experiences that the people of Israel have been through, and God’s faithfulness throughout.



THE LETTERS 2 THESSALONIANS

WRITTEN: AROUND AD 54-56 (OR POSSIBLY LATER IN THE FIRST CENTURY)

WHAT YOU NEED TO KNOW:

Just like 1 Thessalonians, this letter was written to the church in Thessalonica, and the believers still seem to be struggling with very similar issues – some of them thought that Jesus had already returned and they’d missed it. This letter is written in a more formal style than the first one. Some theologians think this might suggest that it was written by someone other than Paul, although it’s possible that Paul is just trying to say things more clearly. As in the previous letter, Paul is trying to make clear some of the basics of the Christian faith to a bunch of relatively new and uncertain Christians.

WHY READ IT?

Some of the Thessalonians were so focused on the end of the world that they had forgotten to live now, so in chapter 3 Paul has to tell them not to be lazy. He reminds us to balance the ‘now’ with what God promises for the future. Like 1 Thessalonians, it’s also a great letter for new Christians (or people just exploring) to read, to learn about some of the fundamentals of Christianity.





ԱՐԾԹՔ ԲԱՐԻ ՕՐՈՒԱՆ ՀԱՄԱՐ

Ո՛վ Տէր, դուն՝ խաղաղութեան առաւօտ՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս, քու պայծառ արեգակդ ծագէ այսօր իմ վրաս եւ յոյսովդ ու բարութեամբդ ողողէ զիս, որպէսզի ամբողջ օրուան ընթացքին զիս առաջնորդեն խաղաղութեան եւ յաջողութեան ճամբաներուն մէջ:

Բարի օր մը պարգեւէ ինծի, ի՛նչ ամենաբարի Տէր: Ըրէ՛ այնպէս, որ սիրտս քու սիրովդ եւ քաղցրութեամբդ լեցուի, եւ ես ալ քու բարութեանդ ցոլացումը ըլլամ շրջապատիս մէջ.- ժխտական կեցուածքներու դիմաց դրական ներկայութիւն ըլլամ, խեղճն ու տկարը ոտնակոխ չընեմ, ցաւին ու տագնապին անտարբեր չմնամ, այլ՝ անհանդուրժողութեան դիմաց լայն բանամ սիրտս, նախանձին ու ատելութեան դիմաց սիրոյդ վահանովը զրահուիմ ու պաշտպանուիմ, տրտունջքներու դառնութեան դիմաց քու քաղցր ցօղը ըլլամ, զրպարտութեան եւ չարութեան ալիքներուն դիմաց քու ցուցաբերած անսահման հասկացողութեանդ, համբերութեանդ փոքրիկ մէկ կաթիլը դառնամ, եւ՝ ընդհակառակը՝ անժպիտ մարդոց ժպիտ մը բերեմ, անուրախ մարդոց սիրտը ուրախացնեմ, յուսահատ մարդոց յաւիտենական կեանքի յոյսը տամ, անսէր մարդոց սէր բաշխեմ, սառնացեալ սիրտերը սիրովդ ջերմացնեմ, եւ քու սուրբ անունովդ կնքեմ եւ քեզի համար կամարեմ ու տաճարացնեմ անոնց հոգիները:

Յաւիտեան քո՛ւկդ եմ, Տէր, տո՛ւր, որ մարդկային միտքերուն անհասանելի քու սիրոյդ ամբողջական տարողութիւնը ճանչնամ, հասկնամ եւ ապրիմ, եւ քու իմաստութեամբդ լեցուր զիս, որպէսզի հասնիմ հաւատքի չափահասութեան, քու կատարեալ նմանութեանդ: Թող քեզի համար պատրաստ եւ ընտիր անօթ մը ըլլամ, եւ իմ խորհուրդներս, խօսքերս ու գործերս միայն ու միայն ծառայեն կամքդ կատարելու եւ քեզ փառաբանելու, Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՊԱՇՏԵՔ ՄԵՐ ՀԱՒԱՍԱՐԱԿՇՈՒԹԻՒՆԸ

Ինչպէ՛ չկորսնցնենք մեր հոգիները, երբ մեր շուրջ, ամէն ինչ եւ ամէն մարդ տարբեր ծայրայեղութիւններու կը տանին մեզ: Կեանքէն ներս ինչպէ՛ս կրնանք հաւասարակողութիւն պահել, երբ շարունակաբար յուսալքումի կ'ենթարկուինք:

Յիսուս կ'ըսէ. «Ձեր գլուխէն մազ մ'իսկ պիտի չկորսուի: Եւ ձեր համբերութեամբ պիտի փրկէք ձեր հոգիները» (Ղկ 21.18-19): Մենք, աշխարհէն եկող տագնապներուն կրնանք դիմադրել այն ատեն միայն, երբ կը գիտակցինք, որ Աստուած մեզմէ շատ ատելի լաւ կը ճանչնայ մեր անձերը: Մենք կրնանք հաւասարակշռութեան մէջ պահել ինքզնինքնիս, երբ հաւատանք որ Աստուած կը պահէ ու կը պաշտպանէ մեզ: Մենք կրնանք մեր կեանքը շահիլ, երբ հաւատարմօրէն կառչած կը մնանք այն ճշմարտութեան, թէ մեր Տիրոջ հովանիին տակ, մեր ամենչնչին մասնիկն իսկ, նոյնիսկ իւրաքանչիւր մագի թելը, լիովին ապահով է: Այլ խօսքով, երբ հոգեւոր կեանք կ'ապրինք, ոչինչ պէտք է մեզի վախ պատճառէ:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՅՐ

ՀԵՆՐԻ Ճ. Մ. ՆՈՒՐՆ
Հայացուց՝ Մակար Արք. Աշգարեան

ՆԻԿԻՈՅ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԻ 1700-ԱՄԵԱԿ

«ՅԱՐԱՐԻՉՆ ԵՐԿՆԻ ԵՒ ԵՐԿՐԻ, ԵՐԵՒԵԼԵԱՅ ԵՒ ԱՆԵՐԵՒՈՒԹԻՑ»:

Առաջին հերթին այս բացատրութիւնը պատասխան մըն էր Գնոստիկեան աղանդաւորներուն, որոնք կը մերժէին Արարիչ Աստուածը ճանչնալ որպէս ճշմարիտ Աստուածը: Անոնց համար Հին Կտակարանի Աստուածը, որ ՀԿ-ի առաջին իսկ էջին վրայ կը ներկայանայ իբրեւ երկինքի եւ երկրի արարիչը, ճշմարիտ Աստուծմէն տարբեր է, անկէ ստորադաս (այսինքն՝ անկէ վար, անոր ենթակայ), մինչ, կ'ըսէին,- ճշմարիտ Աստուածը գործ չունի նիւթողէն չար աշխարհին հետ: Այստեղ այս բացատրութեամբ Եկեղեցին կ'արտայայտէ իր հաւատքը՝ մէկ եւ միակ Աստուծոյ մը հանդէպ, որ նոյնինքն Հին Կտակարանի Աստուածն է, երկինքի եւ երկրի արարիչը:

1.- Արարչութիւն տիեզերքի, հրեշտակներու, մեր աշխարհին եւ մարդուն:
Աստուած ստեղծագործութեան առաջին իսկ պահուն «ստեղծեց երկինքն ու երկիրը»: Ամէն ինչ գոյութեան եկաւ ոչինչէն, Աստուծոյ խօսքով կամ հրամանով (Սղ 33.6-9): Ստեղծագործութեան երկրորդ հանգրուանը եղաւ անոր կարգաւորումը: Ամէն ինչի համար Աստուած կարգ ու կանոն դրաւ, ջուրերէն դուրս բերաւ ցամաքը: Ստեղծագործութեան երրորդ հանգրուանը եղաւ՝ զայն կեանքով լեցնելը: Նախ բուսական կեանքը, յետոյ կենդանականը, եւ ի վերջոյ բանականը կամ մարդկայինը: Երբ ստեղծուեցան «անտեսանելիները», հոգեղէն էակները, այսինքն՝ հրեշտակները: Թէպէտ Ծնունդներու գիրքին առաջին գլուխին մէջ կը թուի թէ այդ մասին տեղեկութիւն մը չունինք, բայց Աստուածաշունչը յստակօրէն կը վկայէ այդ մասին (Սղ 104.4): Անոնք ստեղծուեցան իբրեւ «լոյս», այսինքն՝ լուսեղէն արարածներ, ստեղծագործութեան առաջին օրը: Ս. Ներսէս Շնորհալի Կիրակիին առաջին օրուան իր երգին մէջ կ'ըսէ.-

*«Նորաստեղծեալ բանն յանէից
ի սկըզբանէ՝ զերկինս երկնից,
եւ զերկնային զօրս անմարմնոցն
իմանալեացն զըւարթնոց,
եւ ըզգալի տարերց քառից
հակառակաց միաբանից.
որով յաւէր փառաբանի
երրորդութիւն անճառելի»:*

Հաւատամքը յատուկ կերպով կը շեշտէ, թէ Աստուած է «արարիչը տեսանելի թէ անտեսանելի (արարածներուն)», հերքելու համար կարգ մը աղանդներու եւ իմաստասիրութեանց այն սխալ կարծիքը, թէ հոգեղէն անտեսանելի արարածները ո՛չ թէ ստեղծուած են, այլ՝ Աստուծոյ բանական էութենէն յառաջ եկած: Հաւատամքը յստակօրէն կը հաստատէ, թէ բոլոր գոյութիւններն ալ, հոգեղէն ըլլան թէ մարմնաւոր, մեզի համար տեսանելի ըլլան թէ անտեսանելի, ստեղծուած են միակ Արարիչէն, Աստուծոյ կողմէ:

2.- Նախախնամութիւն:

Աստուած միայն տիեզերքի ստեղծիչը չէ, այլ նաեւ՝ նախախնամողը, այսինքն՝ զայն խնամողը, պահողը, անոր մասին հոգացողը, աշխարհին եւ մարդուն վիճակով զբաղողը: Ասիկա սիրող եւ «Հայր» Աստուծոյ մը ճշմարիտ հասկացողութիւնն է, ամբողջութեամբ տարբեր՝ աշխարհի շատ մը կրօններու եւ իմաստասիրութիւններու ցուրտ հասկացողութենէն, որ զԱստուած կը պատկերացնէ իբրեւ աշխարհէն հեռու, անկէ ամբողջապէս ինքզինք կտրած արարիչ մը կամ անհաղորդ բանականութիւն մը:

3.- Արարչութիւնը իր հրաշալիքներով - «Բարի»:

Աստուածաշունչը իր առաջին էջով իսկ կը յայտարարէ, թէ Աստուած ի՛նք ամէն ինչ ստեղծեց, եւ «տեսաւ որ բարի է»: Ասով Աստուածաշունչը կը հաստատէ, թէ Աստուծոյ ամբողջ ստեղծագործութիւնը բարի է, որովհետեւ ստեղծիչը ինք գերագոյն Բարին է: Իրօք, երբ կը ճանչնանք մեզ շրջապատող աշխարհը, տիեզերքը, մեր միտքն ու սիրտը կը լեցուին հմայքով: Ամէն ինչ կը վկայէ գերագոյն եւ հոգաճու Բանականութեան մը մասին, որ ամէն ինչ ստեղծած է ինքն իր մէջ հրաշալի կատարելութեամբ: Իրապէս որ երկինք եւ երկիր Տիրոջ փառքով լեցուն են, անոր մասին կը վկայեն եւ անոր փառքը կը պատմեն (Ես 6.3: Սղ 19.1):

Հաւատամքը յստակօրէն կը հաստատէ, թէ Աստուծոյ բոլոր ստեղծածներն ալ բարի են. ո՛չ միայն հոգեղէնները, այլ նաեւ մարմնաւորները: Ասիկա կ'ընէ՝ հերքելու համար կարգ մը աղանդներու եւ իմաստասիրութեանց այն սխալ կարծիքը, որ նիւթը, այսինքն՝ մեր մարմինը կը նկատէ չար եւ չարիքի արգիւր: Ճշմարտութիւնը սակայն հակառակն է: Նիւթը կամ մարմինը Աստուծմէ ստեղծուած է, եւ ուստի բարի է:

4.- Արարչութեան ներկայ վիճակը: Ուրկէ՞ չարը, եւ ինչ է չարը:

Երբ մեր շուրջ եւ աշխարհը կը դիտենք, անշուշտ կը տեսնենք նաեւ չարը, չարիքը, որ մեզ կը տագնապեցնէ եւ յաճախ անպատասխան հարցումներու դիմաց կը դնէ: Ուրկէ՞ կու գայ չարը, ինչ է անիկա, այսքան տարածուն եւ երեւութապէս անյաղթահարելի: Որոշ կրօններ չարին գոյութիւնը ճանչնալով հանդերձ՝ կը փորձեն մերժել զայն, ըսելով՝ թէ անիկա իրական չէ, այլ՝ պատրանք է պարզապէս: Մենք գիտենք, սակայն, որ անիկա անուրանալի իրականութիւն մըն է: Հետեւաբար, ուրկէ՞ եւ ինչու չարը: Աստուածաշունչը չարին իրականութիւնը ճանչնալով հանդերձ՝ ցոյց կու տայ թէ չարը Աստուծոյ կողմէ ստեղծուած չէ: Անիկա արդիւնքն է մարդուն ազատ կամքին եւ գործերուն: Աստուած մարդուն տուած է բացարձակ ազատութիւնը՝ ընտրելու եւ ընելու ինչ որ կ'ուզէ, ընտրելու չարը կամ բարին, մահը կամ կեանքը: Բայց Աստուած մարդուն կը յիշեցնէ նաեւ, որ մեր ընտրութիւնը իր հետեւանքները ունի, որ մարդ պիտի կրէ անպայմանօրէն: Սխալ որոշում մը իր ցաւալի արդիւնքները կրնայ ունենալ, որ մարդ պիտի կրէ անխուսափելիօրէն: Աստուած մարդուն ցոյց կու տայ ուղիղը, բայց չի կաշկանդեր մարդուն ազատութիւնը՝ ընտրելու ինչ որ կ'ուզէ:

5.-Արարչութեան նպատակը եւ վախճանակէտը:

Ամբողջ ստեղծագործութիւնը Աստուծոյ սիրոյն արտայայտութիւնն է: Ս. Գրիգոր Լուսաւորիչ կ'ըսէ. «Արարիչին սէրը ստիպեց զինք ստեղծելու բոլոր արարածները, թէ՛ տեսանելիները եւ թէ՛ անտեսանելիները: Ո՛չ թէ Աստուած ինք պէտք ունէր, այլ՝ որպէսզի ի յայտ գայ իր փառքը, որ տեսանելի թէ անտեսանելի արարածներուս ընդմէջէն կը տեսնուի եւ կը հասկցուի» (Յաճախապատում, Ճառ Բ.): «Ամէն ինչ իրմէ է, իրմով եւ իրեն համար գոյութիւն ունի» կ'ըսէ Հռոմայեցիներուն նամակը (11.36): Եւ ասիկա ցոյց կու տայ Աստուծոյ ճշմարիտ նպատակը: Աստուած աշխարհը մարդուն համար ստեղծեց, եւ մարդը՝ իր սիրոյն եւ իր փառքին համար: Աստուած իր սիրոյն եւ իր բարիքներուն հաղորդակից կը դարձնէ մեզ, որպէսզի մենք ալ իրեն հանդէպ մեր սիրով հաղորդուինք իրեն, իր սեփական «ժողովուրդը» եւ «ընտանիքը» դառնանք (հմմտ Եփ 2.19), եւ Տիրոջ հետ ըլլանք յաւիտեան (Ա.Թս 4.17):

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅՈՅՑ ՀԱՒԱՏԱՄՔԻՆ
Ջարեհ Արք. Ազնաւորեան
(Շարունակելի 3)



Ազգային Առաջնորդարան
Armenian Prelacy of Canada
Prélature Arménienne du Canada



514-856-1200
prelacy@armenianprelacy.ca
www.armenianprelacy.ca



Խմբագիր՝ Հոգեշնորհ Տ. Յակոբ Վրդ. Եագուպեան
3401 Olivar Asselin Montréal, Quebec H4J 1L5